# ՏԱՇԻՐ–ԶՈՐԱԳԵՏԻ ԿՅՈՒՐԻԿՅԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՑՈՒՄՆ ՈՒ ՀԶՈՐԱՑՈՒՄԸ

ԱՐՏԱՇԵՍ ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ

*Բագրատունյաց Հայաստանում ավատատիրական հարաբերությունների խորացման հետևանքով հզորացած տեղական իշխանների անջատողական ձգտումների աճի և արտաքին ուժերի բացասական ներգործության պատճառով պետությունը X դ. սկզբներից բռնեց աստիճանական մասնատման ու անկման ուղին: Սկսեցին առաջանալ Անիի Բագրատունիների գերիշխանությունը հաճախ ձևականորեն ընդունող քաղաքական կազմավորումներ՝ տեղական թագավորություններ ու իշխանություններ: Դրանցից էր Տաշիր-Զորագետի Կյուրիկյան թագավորությունը:*

*Բագրատունիների թագավորության առաջին շրջանում Տաշիրը տնօրինվում էր արքայատոհմին չպատկանող նշանակովի կառավարիչ-վերակացուների միջոցով: Սակայն հետագայում հաշվի առնելով նրանց անջատողական անթաքույց ձգտումները և ռազմավարական առումով խիստ կարևոր այդ տարածաշրջանն արքայատան անդամի միջոցով հնարավորինս հուսալի վերահսկողության տակ պահելու հրամայականը, Աշոտ III Ողորմածը (953-977) մինչ 972 թ. Տաշիրի կառավարիչ նշանակեց առնվազն 958-ից իրեն գահակից ավագ որդուն՝ Սմբատին[1]: Վերջինս էլ հայրական գահը միահեծան ժառանգելուց հետո իր փոխարեն Տաշիրում վերակացու հաստատեց կրտսեր եղբորը՝ Գուրգենին, որն ուներ նաև Դերենիկ կրկնանունը: Հենց Գուրգենն էր, որ իր հորեղբայր Մուշեղից հետո հիմնադրեց Անի Բագրատունիներին ենթակա՝ Բագրատունյաց կրտսեր ճյուղի մի նոր թագավորություն: Այս տեղական թագավորության և այնտեղ իշխած արքայատոհմի Կյուրիկյան անվանումը կապված է Գուրգենի՝ տեղական արտասանությամբ Կյուրիկե կոչվելու հետ:*

*Կյուրիկյան թագավորության ստեղծումը ժամանակատար գործընթաց էր, և դրա հռչակման թվականը պատմագիտական գրականության մեջ վիճարկվում է 966–988 թթ. միջակայքում: Դա մասնավորապես բացատրվում է նրանով, որ սկզբնաղբյուրներից միայն Մխիթար Այրիվանեցին է հիշատակել Գուրգենի թագավոր դառնալու տարեթիվը: Ըստ նրա, դա տեղի է ունեցել 981 թ.[2]: Այս իրադարձությանն անդրադարձած մյուս երկու հեղինակները՝ ենթադրաբար XII դարում ապրած Անանուն ժամանակագիրն ու Վարդան վարդապետը որևէ թվական չեն*

---

[1] *«Արարատ», 1897, -Գ, էջ 144, Մաշտոցի անվան Մատենադարան (այսուհետև՝ ՄՄ), ձեռ. № 3031, էջ 38:*

[2] *Մխիթարայ Այրիվանեցւոյ պատմութիւն Հայոց (այսուհետև՝ Մխիթար Այրիվանեցի), Մոսկվա, 1860, էջ 56:*

*նշում: Նրանցից առաջինի համաձայն Աշոտ III-ի մահից հետո նրա որդիները՝ Սմբատը, Գագիկն ու Գուրգենը, «համակամ սիրով երիս բաժանեն զթագաւորութիւնն՝ հայրագլուխ առնելով զՍմբատ»[3], իսկ ըստ երկրորդի՝ Աշոտ III-ը մահացավ «թողլով երիս որդիս, զՍմբատ, զԳագիկ և զԳուրգէն, որ և ի նմին աւուր առնու զթագն երէց որդին Սմբատ... և կրտսեր եղբայրն ժառանգէ զՏաշիր Սևորդովքն Զորոյգետին»[4]:*

*Այսպիսով, վերոհիշյալ բոլոր երեք սկզբնաղբյուրների համաձայն Գուրգենը թագավոր է դարձել հոր մահից, այն է՝ 977 թ. հետո: Որ դա այդպես է, ստույգ երևում է Սանահնի վանքի քարտուղար-դպիր Սիմեոնի 979 թ. հիշատակարանից, որտեղ Գուրգենը վկայակոչվում է իբրև «իշխան բնաւ երկրին Տաշրայ»[5]: Կուրթան գյուղի գերեզմանոցի խաչքարի 986-ով թվագրվող արձանագրության մեջ Գուրգենն արդեն Կյուրիկե անվանաձևով հանդես է գալիս թագավոր տիտղոսով: Ճիշտ է, Մատթեոս Ուռհայեցին Գուրգենին «Ադուանից թագաւոր» տիտղոսով հիշատակում է 974 թ. Հովհաննես Չմշկիկ կայսրի արշավանքի կապակցությամբ Աշոտ III-ի կազմակերպած զորահավաքի մասնակիցների թվում[6], սակայն դա հետին թվով է, քանի որ Կյուրիկյաններն այդ ժամանակ Հայոց Աղվանքում դեռևս տիրույթներ չունեին: Ավելին, Մատթեոս Ուռհայեցու կողմից այդ զորահավաքի մասնակիցների թվում իբրև թագավորներ հիշատակված Աբասը Կարսի թագավոր է դարձել 984 թ., իսկ Սենիքերիմը Վասպուրականի գահը զբաղեցրել է 1003 թ.: Ինչ վերաբերում է նրանց շարքում թվարկված Կապանի Ֆիլիպե թագավորին, ապա նա ոչ այլ ոք է, եթե ոչ Արցախի արքայիկներից մեկը: Հետևաբար, Տաշիր-Զորագետի Կյուրիկյան թագավորությունը ստեղծվել է Աշոտ III-ի մահից հետո՝ 979–985 թթ. միջև: Ասվածի հաշվառմամբ Մխիթար Այրիվանեցու առաջարկած թվականը պետք է համարել ընդունելի և Տաշիր-Զորագետում Գուրգենի թագավոր հռչակվելը թվագրել 981-ով: Կարելի էր ենթադրել, որ այդ իրադարձությունը Բագրատունյաց կենտրոնական իշխանության թուլացման հետևանք էր և կապելով Ատրպատականի Էմիր Սալարյան Աբու-լ-Հայջայի 982 թ. արշավանքի հետ՝ թվագրել 982-ով: Սակայն չնայած Կարս-Վանանդի թագավոր Մուշեղի դրդմամբ Հայաստան ներխուժած Աբու-լ-Հայջան գրավեց Դվինը, մտավ Շիրակ ու ավերեց Հոռոմոսի վանքը՝ Սմբատ II-ի կողմից իր դեմ դուրս բերված Գողթնի ամիրա Աբուտլուփի հետ բախվելով ոչ միայն պարտվեց, այլև գերի ընկավ,[7] իսկ Սմբատ II-ի իշխանությունը զգալի ցնցում չապրեց: Հետևաբար, պետք է ընդունել Մխիթար Այրիվանեցու մատնանշած 981 թվականը՝ իբրև Տաշիր-Զորագետի Կյուրիկյան թագավորության հռչակման տարի:*

---

[3] *Մանր ժամանակագրություններ, XII-XVIII դդ., հ. II, կազմեց Վ. Ա. Հակոբյան, Երևան, 1956, էջ 501:*

[4] *Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի լուսաբանեալ (այսուհետև՝ Վ ա ր դ ա ն վ ա ր դ ա պ ե տ), Վենետիկ, 1862, էջ 90:*

[5] *ՄՄ, ձեռ. № 3031, թ. 43:*

[6] *Մատթէոսի Ուռհայեցւոյ Ժամանակագրութիւն (այսուհետև՝ Մ ա տ թ է ո ս Ո ւ ռ հ ա յ ե ց ի), Վաղարշապատ, 1898, էջ 17:*

[7] *Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական (այսուհետև՝ Ա ս ո ղ ի կ), Սանկտ Պետերբուրգ, 1885, էջ 188-189:*

*Ինչպես երևում է վերոհիշյալ ժամանակագրության հաղորդումից, Գուրգենն ընդունում էր ավագ եղբոր գերագահությունը և հայրական ժառանգության մի մասը ստացել էր նրան անվերապահ ենթարկվելու պայմանով: Իսկ թե որո՞նք էին Տաշիր-Զորագետի Կյուրիկյան թագավորության սահմանները, իմանում ենք ենթադրաբար XII դ. ապրած Անանուն ժամանակագրի, Վարդան վարդապետի ու Մխիթար Այրիվանեցու վկայություններից և, հատկապես, Սմբատ II-ի (977–991) մի հրովարտակից, որը թվագրվում է 979-ով: Նրանցից առաջինի համաձայն, Գուրգենը տիրեց «Գոգարացւոց կողմանս սկսեալ ի Գագայ, Խառայ մինչև ի դուռն Տփխաց»[8], իսկ ըստ երկրորդի՝ նա ստացել էր «զՏաշիր Սևորդւովքն Զորոյգետին. և զԿայեն և զԿայծոն, զԽորխոռունիք՝ որ ի Խոռայ շինեցաւ, որ է Խոժոռնի և Խոռակերտ, և զԲազունիք՝ որ է Բազկերտ ի գաւառն Տաշրայ և այլ բերդք անուանիք»[9]: Մխիթար Այրիվանեցին սահմանափակվել է «Գուրգէն ի Վիրս և Սմբատ եղբայր նորա ի Հայս թագաւորեցին»[10] հիշատակությամբ: Տաշիր-Զորագետի Կյուրիկյան ապագա թագավորության սահմաններն առավել մանրամասն ներկայացված են 979 թ. Սանահին այցելության ժամանակ Սմբատ II-ի թողած հրովարտակում:*

*Բանն այն է, որ իբրև առանձին վարչաքաղաքական միավոր Սմբատ II-ի կողմից Գուրգենին որպես կառավարիչ - վերակացու հանձնված տարածաշրջանը պետք է ունենար այն ամբողջությամբ ընդգրկող եկեղեցական կազմակերպություն՝ հոգևոր վիճակ: Արդեն 960-ական թվականների կեսերին Սանահնի վանքի Ամենափրկիչ եկեղեցու կառուցումից հետո Աշոտ III-ն ու Խոսրովանուշ թագուհին վանքին որոշ կալվածքներ էին շնորհել, և այն դարձել էր Տաշիր գավառի հոգևոր թեմի կենտրոնը՝ Ամենափրկիչ մայր եկեղեցով: Արդեն 970 թ. այդ թեմի առաջնորդն էր Գրիգոր եպիսկոպոսը, ինչը հավաստում է վերոհիշյալ Սիմեոնի 972 թվակիր վկայությունը՝ «յեպիսկոպոսութեան մերումս նահանգի գաւառիս Տաշիր Գրիգորի արժանաւոր հաւտապետի, որ և նորա յառաջնորդութեան են ամք Բ»[11]: Սակայն բանն այն է, որ Գուրգենի տնօրինությանը հանձնված նորաստեղծ վարչական միավորն ավելի մեծ տարածք ուներ, քան Սմբատի վերակացության տակ գտնվածը և Տաշիրի հոգևոր թեմի իրավասությունը նրա բոլոր շրջանների վրա չէր տարածվում: Մինչդեռ, ընդունված կարգի համաձայն, վարչատարածքային ցանկացած միավորի աշխարհիկ ու հոգևոր իշխանությունների սահմանները պետք է համընկնեին: Այս անհամապատասխանությունը վերացնելու անհրաժեշտությամբ և Ամենափրկչի փոխարեն իր նախնիների գերեզմանատուն Սուրբ Աստվածածին եկեղեցին նորահաստատ թեմի մայր եկեղեցին դարձնելու Սմբատ II-ի ցանկությամբ է բացատրվում նրա 979 թ. այցը Սանահին և համապատասխան հրովարտակի արձակումը:*

*Այդ հրովարտակով Սմբատ II-ը կաթողիկոս Խաչիկ I-ի միջոցով Սանահնի Սուրբ Աստվածածին եկեղեցին Գուրգենին հանձնված տիրույթներն ընդգրկող*

---

[8] *Մանր ժամանակագրություններ, XIII–XVIII դդ., հ. II, էջ 501:*

[9] *Վ ա ր դ ա ն  վ ա ր դ ա պ ե տ, էջ 90:*

[10] *Մ խ ի թ ա ր  Ա յ ր ի վ ա ն ե ց ի, էջ 56:*

[11] *ՄՄ, ձեռ. № 3031, էջ 37:*

*եկեղեցական կազմակերպության մայր եկեղեցի դարձնելով՝ Եսայի եպիսկոպոսի առաջնորդությամբ հոգևոր վիճակ սահմանեց: Այն ներառում էր «զամենայն երկիրն Տաշրաց՝ զՎերին և զՆերքին, մինչ ի լեառն՝ Բազում յայս կոյս և յայն կոյս մինչ ի սահմանս Գուգարաց աշխարհին և մինչ ի սահմանս Տրփխաց և Վրաց, և ի սահմանս Նիգ գաւառի. և մինչ ի սահմանս Կայենոյ. և զսահմանս Ծաղկոցաց, մինչ ի սահմանս տան Շիրակայ»[12]: Հետևաբար, նորաստեղծ Տաշիր-Զորագետի Կյուրիկյան թագավորությունը ներառում էր ոչ միայն նախկին Տաշիր վարչական միավորն ամբողջությամբ, այլև հարակից մի շարք տարածքներ: Այն ձգվում էր Փամբակի ու Աղստևի հովիտներից մինչև Տփխիսի մերձակայք և Ծաղկունյաց լեռնաշղթա ու Նիգ գավառ: Հյուսիսից այն սահմանակից էր վրաց Բագրատունիների թագավորությանը և Տփխիսի արաբական ամիրայությանը, հարավից՝ Պահլավունիների իշխանությանը, արևելքից՝ Շադդայանների տիրապետության տակ գտնված հայկական շրջաններին, իսկ արևմուտքից՝ Անիի Բագրատունիների բուն տիրույթներին:*

*Ինչպես թագավոր դառնալուց առաջ, այնպես էլ հետո Գուրգենի մասին պահպանված տեղեկությունները խիստ աղքատիկ են: Դրանից հետևում է, որ նա երկրի ռազմաքաղաքական կյանքին գործուն չի մասնակցել՝ բավարարվել է իր գավառական թագավորության գործերը տնօրինելով: Գուրգենը շարունակել է Սանահնի ու Հաղբատի վանական համալիրների կառուցապատումն ու հարդարումը, ինչի վկայությունն է Սանահնի վանքին երկու մեծ ու շքեղ ջահ նվիրելը[13]: Նա, անկասկած, մասնակցել է 988 թ. ապխազաց Սմբատ թագավորի դեմ Սմբատ II-ի զորաշարժին՝ ի պաշտպանություն Դավիթ Կյուրապաղատի ու վրաց թագավոր Բագրատ III-ի: Երբ Սմբատ II-ի կասկածներ հարուցած մահից հետո հենց նույն օրը գահակալեց նրա միջնեկ եղբայր Գագիկ I-ը[14], նա իրեն ենթարկվելու պայմանով իրենց գահերին վերահաստատեց ինչպես կրտսեր եղբորը՝ Գուրգենին, այնպես էլ հորեղբորը՝ Կարս-Վանանդի թագավոր Մուշեղին[15]: Սկզբնաղբյուրներում վերջին անգամ 991 թ. հիշատակված Գուրգենը, ըստ ենթադրաբար XII դ. ապրած Անանուն ժամանակագրի, թագավորել է Ծ (50) տարի[16], ինչն ակնհայտ գրչական սխալ է և սրբագրելի է Ժ (10)-ով[17], հաստատելով նրա 981-ին թագավոր հռչակված լինելը: Լինելով խիստ բարեպաշտ ու կրոնասեր անձնավորություն, նա այնուհետև կամավոր թողել է գահը և Սանահնում ութ տարի կրոնավորելով վախճանվել: Հուղարկավորվել է Սանահնի Սուրբ Աստվածածին եկեղեցում: Ունեցել է երկու որդի՝ Դավիթ ու Սմբատ:*

*Գուրգենին հաջորդեց ավագ որդին՝ Դավիթը, գահակից ունենալով կրտսեր եղբորը՝ Սմբատին: Վերջինիս դերը թագավորության ղեկավարման գործում շատ համեստ էր, ինչպես կարելի է մակաբերել սկզբնաղբյուրների կողմից նրան անու-*

---

[12] *Նույն տեղում, էջ 47-48:*
[13] *Նույն տեղում, էջ 50-53:*
[14] *Ա ս ո ղ ի կ, էջ 255:*
[15] *Մ ա տ թ է ո ս Ռ ո ւ հ ա յ ե ց ի, էջ 10:*
[16] *Մանր ժամանակագրություններ, XIII-XVIII դդ., հ. II, էջ 501:*
[17] *Հմմտ. նույն տեղում, էջ 503, ծան. 3:*

*շադրության մատնելուց: Փոխարենը սկզբնաղբյուրները մեծ տեղ են հատկացրել պետական ու ռազմական անուրանալի հատկանիշներով օժտված Դավիթ Կյուրիկյանին, որն ավելի շատ հայտնի է Դավիթ Անհողին անվանումով: Նրա օրոք Տաշիր-Զորագետի Կյուրիկյան թագավորությունը հասավ իր հզորության գագաթնակետին, իսկ ինքը եղավ Կյուրիկյան արքայատոհմի ամենանշանավոր ներկայացուցիչը: Հայրական գահը պատանի հասակում ժառանգելը նրան չխանգարեց հասկանալու իր թագավորության առջև ծառացած խնդիրները և հաջողությամբ հասնելու դրանց լուծմանը: Նա նախ ոչ պատահաբար իր թագավորության կենտրոն դարձրեց դրա հյուսիսային ծայրամասում ընկած Շամշուլդե բերդաքաղաքը: Դրանից հետո Դավիթը ձեռնամուխ եղավ իր թագավորությանը հյուսիսից և արևմուտքից Տփխիսի արաբական Ջաֆարյան ամիրայությունից ու նրան ենթակա Դմանիսի ամիրայությունից սպառնացող իրական վտանգը վերացնելուն: Այդ նպատակով նա ակներևաբար 990-ական թվականների կեսերին արագորեն գրավեց Դմանիսի ամիրայությունը և միացրեց իր թագավորությանը[18]: Դրա շնորհիվ թագավորության տարածքն ընդարձակվեց, նրա մյուս գավառներից Շամշուլդեի կտրվածությունը Շամշուլդե-Դմանիս ճանապարհի շնորհիվ վերացավ, իսկ արևմտյան սահմաններն անվտանգ դարձան: Բնականաբար, Դմանիսի ամիրայության գրավումը պետք է հանգեցներ Տփխիսի ամիրա Ալի իբն Ջաֆարի ու Դավիթ Անհողինի զինական բախմանը: Դավիթը նրան ջախջախելով հպատակեցրեց իրեն, որով վերացրեց նաև հյուսիսից իր թագավորությանը և, հատկապես, Շամշուլդեին սպառնացող լուրջ վտանգը[19]:*

*Առաջին հերթին իր թագավորության շահերից բխող այս քայլերով Դավիթը նպաստեց նաև Բագրատունյաց Հայաստանի հյուսիսային սահմանների մի կարևոր հատվածի ամրապնդմանը: Դրանից հետո մինչև 1001 թ. նա ստիպված էր բախվել հարավ-արևելքից իր թագավորությանը սպառնացող մի նոր ու ավելի զորեղ ուժի՝ 970-ական թվականներից Գանձակում հաստատված քրդական ծագմամբ Շադադյանների ամիրայության հետ: Ծավալապաշտական միտումներ ունեցող և հատկապես Փատլուն I-ի (985–1031) օրոք հզորացած այդ ամիրայությունը փորձեց կանխել Տաշիր-Զորագետի Կյուրիկյան թագավորության հետագա վերելքը: Երբ Փատլուն I-ը հարձակվեց Դավթի վրա, ըստ երևույթին, Կուրի ափին, խայտառակ պարտություն կրեց և մազապուրծ փախավ մարտադաշտից[20]: Սակայն Դավթին չհաջողվեց զարգացնել հաղթանակի արդյունքը և Շադադյաններին պատկանող հայկական տարածքների հաշվին ընդլայնել իր թագավորությունը: Այդուհանդերձ, Շադադյաններից սպառնացող վտանգն առժամանակ կանխվեց: Դրանից հետո Դավիթը ստիպված էր ճնշելու կենտրոնախույս միտումներ դրսևորած Գագի իշխան, մարզպան Դեմետրեի խռովությունը: Ինչպես հետևում է Ասողիկի պատմածից, Դավթի վստահությունը կորցնելով, նա «թողու զհաւատս հայրենի հայութեան և թիկունս օգնականի*

---

[18] *Ա ս ո ղ ի կ, էջ 256:*

[19] *Նույն տեղում:*

[20] *Նույն տեղում, էջ 257:*

*զՎիրս արարեալ»[21], քաղկեդոնական էր դարձել: Բացի այդ, նա իր որդուն ևս քաղկեդոնական դարձնելով, Հնեվանքում Տաշիրի մամփայլ՝ արքեպիսկոպոս էր կարգել: Այսպիսով, Դեմետրեն, քաղկեդոնականությանը հարելով, ակնհայտորեն փորձում էր իր անջատողական ծրագրերի իրագործման համար ստանալ վրաց աջակցությունը և դրա շնորհիվ դյուրացնել Դավթից անկախանալը: Դա, սակայն, նրան չհաջողվեց: Դավիթը նրան դուրս հանեց Գագից և խլեց բոլոր ամրոցներն ու տիրույթները՝ դատապարտելով թափառական կյանքի[22]:*

*Դավիթն ամուսնացել էր Կախեթի վերջին քորեպիսկոպոս Դավթի (976-1010) դուստր Զորակրցելի հետ: Այս իրողությունը, թագավորության հյուսիսային ծայրակետում գտնվող Սամշվիլդեն նստավայր դարձնելը, Դմանիսի ամիրայության նվաճումն ու Տփխիսի ամիրայությունը ջախջախելն ու հնազանդեցնելը և Դեմետրե մարզպանի խռովության ճնշումը վկայում էին, որ Դավիթ Կյուրիկյանի հեռահար նպատակը Կախեթի թագավորությանը մերձենալն էր, եթե ոչ դրան տիրանալը: Սակայն դրան խանգարեցին երկու հանգամանք: Դրանցից առաջինը նույն նկրտումն ունեցող վիրա-աբխազական թագավորության հզորացումն էր, իսկ երկրորդը՝ իր հորեղբայր ու սյուզերեն Գագիկ I-ին՝ սեփական ուժերը գերագնահատած Դավթի չհնազանդվելու անհաջող փորձը: «Իսկ Դաւիթ եղբօրորդի Գագկայ…,– գրում է Ասողիկը,– սակաւ ինչ ամբարձեալ անհնազանդութեան մասամբ առ հօրեղբայր իւր Գագիկ»[23]: Իր հզորության գագաթնակետում գտնվող Գագիկը 1001 թ. ձմռանը մեծ զորքով շարժվեց Տաշիր-Զորագետի Կյուրիկյան թագավորության վրա: Նա մտավ Տաշիր, շրջապատեց Շամշուլդեն, ավերեց վրաց դաշտը, ապա Գագ բերդով իջավ Աղստև գավառ: Այս ամենը կատարվեց ընդամենը երեք ամսվա ընթացքում: Դավիթը երկու անգամ փորձեց մարտ տալ հորեղբորը, սակայն ուժերի ծայրահեղ անհավասարությունը նրան ստիպեց հրաժարվելու այդ մտքից և դիմելու կաթողիկոս Սարգիս Ա-ի օգնությանը: Կաթողիկոսի միջնորդությամբ Դավիթը գնաց Շիրակավան՝ Գագիկ I-ի մոտ և հնազանդություն հայտնեց: Ըստ պատմիչի, «Եւ ուխտ խաղաղութեան հաստատեալ Տեառն Սարգսի՝ կալ ի հնազանդութեան Դաւթի, իբրև որդի առ հայր, և Գագկայ՝ հայրենի խնամով սիրել զնա»[24]: Չնայած եղբորորդուն հայրաբար սիրելու խոստմանը, Գագիկը նրանից խլեց Աղստև գավառը՝ Կայան ու Կայծոն բերդերով՝ հանձնելով իր ավագ որդի Հովհաննես-Սմբատին, ինչը երևում է Վարդան վարդապետի վկայությունից[25]:*

*Թեև որոշ ուսումնասիրողներ փորձել են Դավթի Անհողին մականունը կապել այդ իրադարձությունների ժամանակ հողերից զրկվելու հետ, սակայն այժմ կորած և միայն Ռ. Երգնկյանցի ընթերցմամբ հայտնի՝ Հաղբատի ՆԽԵ (996) թվակիր արձանագրության համաձայն Դավիթն այդպես է կոչվել դրանցից առաջ[26]: Այդ արձանագրության թվականի ընթերցումը սրբագրելու հիմքեր չունենք, քանի որ*

---

[21] *Նույն տեղում:*
[22] *Նույն տեղում:*
[23] *Նույն տեղում, էջ 279:*
[24] *Նույն տեղում, էջ 279-280:*
[25] *Վ ա ր դ ա ն  վ ա ր դ ա պ ե տ, էջ 92, Ա ս ո ղ ի կ, էջ 280:*
[26] *Տե՛ս Կ ա ր ո  Ղ ա ֆ ա դ ա ր յ ա ն. Հաղբատ, Երևան, 1963, էջ 264:*

*այն երկիցս՝ թե սկզբում և թե վերջում ՆԽԵ է թվագրված եղել: Եթե անգամ արձանագրության թվականի միավորը՝ Ե-ն Է-ով փոխենք, ապա կստանանք 1001-ին երեք տարով նախորդած 998 թվականը և, վերջին հաշվով, ոչինչ չի փոխվի: Բացի այդ, արձանագրությունում հիշատակված հայր Սիմեոնը Հաղբատի առաջնորդությունը վարել է 991 թ. սկսած: Ոչ պակաս կարևոր է նաև այն, որ եթե այդ արձանագրությունը 1001 թ. հետո փորագրվեր, ապա «իբրև որդի առ հայր» Գագիկին հնազանդված և տիրույթների մի մասից զրկված Դավիթը դրանում ոչ մի դեպքում «ինքնակալ արքա» չէր հորջորջվի: Իսկ եթե ընդունենք, որ Դավթի Անհողին մականունը կապված է 1001 թ. իրադարձությունների հետ, ապա անբացատրելի կմնա, թե ինչու է դրանց միակ սկզբնաղբյուր և ժամանակակից Ասողիկն այդ մասին լռում:*

*Հետագա երկու տասնամյակում Դավիթ Անհողինի գործունեության մասին ստույգ ոչինչ հայտնի չէ: Հավանաբար, նա այդ ընթացքում զբաղված էր իր թագավորության պաշտպանական համակարգի ամրապնդմամբ, ինչի արդյունք էին Լոռէ բերդաքաղաքի և տասներկու բերդերի կառուցումը: Շինարարական ծախսատար այս աշխատանքները ենթադրել են տալիս, որ Տաշիր-Զորագետի Կյուրիկյան թագավորությունը տնտեսական վերելք էր ապրում: Երբ 1020 թ. Գագիկ I-ի մահից հետո նրա որդիներ Հովհաննես-Սմբատի ու Աշոտ IV-ի միջև Անիի Բագրատունյաց թագավորությունը բաժանվեց, և վերջինիս անցավ «դրուց աշխարհը»,[27] Դավիթ Անհողինը դարձավ նրա անմիջական ենթական:*

*Ինչպես ցույց տվեցին հետագա իրադարձությունները, իր թագավորության պաշտպանական համակարգի ամրապնդման ուղղությամբ Դավիթ Անհողինի ձեռնարկումներն արդարացված էին: Փատլուն I-ը չէր հրաժարվել ինչպես վիրա–աբխազական ու Կախեթ-Հերեթի թագավորությունների և Տփխիսի ամիրայության, այնպես էլ Կյուրիկյան թագավորության նկատմամբ իր ծավալապաշտական ծրագրերից: Դրան նպաստում էր ոչ միայն Գագիկ I-ից հետո երկրի հետագա մասնատումն ու թուլացումը, այլև Փատլունի հզորացումը, որը «տիրէ Խաչենոյ և Գորոզոյ և Սևորդեացն, և գոռ դնէ ընդ Գագկայ թագաւորին Զորոյգետոյ, և ընդ Կիւրիկէի թագաւորին Արուանից և ընդ Բագարատայ թագաւորին Վրաց, և նեղէր զնոսա»[28]: Վարդան վարդապետի այս վկայության մեջ Դավիթ Անհողինը շփոթվել է որդու՝ հետագայում Կախեթ-Հերեթի թագավոր Գագիկի հետ: Ինչ վերաբերում է Աղվանից Կյուրիկե թագավորին, ապա նա Կախեթ-Հերեթի թագավոր Կյուրիկե III-ն է՝ Դավթի աներորդին:*

*Վիրա–աբխազական ու Տփխիսի ամիրա Զաֆարի զորքերը և Դավիթ Անհողինի բանակը նախահարձակ լինելով ներխուժում են Շիրվան և, հավանաբար, 1031 թ. Էկլեցի կոչվող գետի ափին Փատլունին գլխովին ջախջախելով փախուստի մատնում՝ տիրանալով հսկայական ռազմավարի[29]:*

---

[27] *Մ ա տ թ է ո ս Ո ւ ռ հ ա յ ե ց ի, էջ 10, Սմբատայ Սպարապետի Տարեգիրք (այսուհետև՝ Ս մ բ ա տ Ս պ ա ր ա պ ե տ), Վենետիկ, 1956, էջ 6:*

[28] *Վ ա ր դ ա ն վ ա ր դ ա պ ե տ, էջ 100-101:*

[29] Матиане Картлиса, пер., введ. и примеч. М. Лордкипанидзе. Тбилиси, 1976, с. 47.

*1037 թ. առանց արու ժառանգ թողնելու, սպանված Կյուրիկե III-ին Կախեթ-Հերեթի գահին հաջորդեց նրա քրոջ տղան՝ Դավիթ Անհողինի որդի Գագիկը: Դրանից հետո Կախեթ-Հերեթում գահակալեց Կյուրիկյանների կրտսեր ճյուղը և, բնականաբար, այն հայտնվեց Տաշիր-Ձորագետի Կյուրիկյան թագավորության քաղաքական ազդեցության ոլորտում: Տրամաբանական է, որ այս հանգամանքը պետք է հանդիպեր Վրաստանի միավորմանը ձգտող վիրա-աբխազական թագավոր Բագրատ IV-ի (1027–1072) հակազդեցությանը և վրաց Բագրատունիներ–Կյուրիկյաններ հակասությունների խորացմանը: Ուստի պատահական չէ, որ երբ Շադադյան նոր էմիր Աբու-լ-Ասվար իբն Ֆադլը 1040 թ. հսկայական բանակով Գանձակի կողմից ներխուժեց Տաշիր-Ձորագետի Կյուրիկյան թագավորություն[30] և մեկ տարվա ընթացքում գրավեց նրա տարածքի մեծ մասը, Բագրատ IV-ը չշտապեց օգնել Դավիթ Անհողինին: Ուժերի ծայրահեղ անհավասարությունը վերջինիս ստիպեց հրաժարվել ճակատամարտ տալու մտքից և դիմելու Աշոտ IV-ի մահից հետո իր գերական դարձած Հովհաննես-Սմբատի օգնությանը: Քանի որ մինչ այդ վերջինս անտարբեր դիտում էր, թե ինչպես է էմիրն ավերում ենթակայի թագավորությունը, ուստի Դավիթ Անհողինը վստահ չէր, որ նրանից օգնություն կստանա: Այդ իսկ պատճառով նա Հովհաննես-Սմբատին սպառնաց, որ հակառակ դեպքում կհպատակվի Աբու-լ-Ասվարին ու նրա հետ կհարձակվի Շիրակի վրա: Հովհաննես-Սմբատը համոզվելով, որ այլևս կորցնելիք չունեցող Դավիթ Անհողինը կիրագործի իր սպառնալիքը, նրան ոչ միայն օգնական զորք տրամադրեց, այլև դրդեց նույնն անելու Սյունյաց Սմբատ թագավորին, որին ևս սպառնում էր Աբու-լ-Ասվարի հարձակման վտանգը: Նույն սպառնալիքով Դավիթ Անհողինն օգնական զորք ստացավ նաև Բագրատ IV-ից: Այսպիսով, ներառյալ իր ունեցած զորքը, Դավիթ Անհողինի տրամադրության տակ հավաքվեց քսան հազարանոց բանակ: Ապա, քանի որ դա քիչ էր, նա էմիրի դեմ պայքարին կրոնական ու համաժողովրդական բնույթ հաղորդելու նպատակով՝ դիմեց Աղվանից Հովսեփ կաթողիկոսին: Դրա շնորհիվ Դավիթ Անհողինի բանակատեղի եկավ Հայոց Աղվանից ամբողջ հոգևոր դասը և աշխարհազորի վերածված բազմահազարանոց ժողովուրդ: Ճակատամարտն ավարտվեց իր ուժերին վստահ Աբու-լ-Ասվարի թվական մեծ գերակշռություն ունեցող բանակի խայտառակ պարտությամբ: Այն ոչ միայն ծանր կորուստներով նահանջեց, այլև հինգ օր շարունակ ոգևորված հակառակորդի կողմից հետապնդվելով՝ տվեց բազմաթիվ նոր զոհեր: Դավիթ Անհողինը երեք օրվա ընթացքում վերանվաճեց էմիրի ձեռքն անցած իր բոլոր տիրույթները, իսկ թշնամուց խլված հսկայական ռազմավարը բաժանեց իրեն օգնության եկածներին[31]:*

*Այս իրադարձություններին հետևեց 1041 թ. Հովհաննես-Սմբատի մահը, որից հետո Անիի Բագրատունյաց թագավորության գահը մնաց թափուր: Հնարավոր է, որ Հովհաննես-Սմբատից հետո Բագրատունյաց ազգապետ դառնալը Դավիթ Անհողինին դրան տիրելու հույսեր էր ներշնչել, քանի որ նա դժվար թե Անիում կողմ-*

---

[30] *Մանրամասն տե՛ս Ա. Տ ե ր - Ղ և ո ն դ յ ա ն. Արաբական ամիրայությունները Բագրատունյաց Հայաստանում, Երևան, 1965, էջ 208-210:*

[31] *Մ ա տ թ է ո ս Ո ւ ռ հ ա յ ե ց ի, էջ 79-82: Հմմտ. Ս մ բ ա տ Ս պ ա ր ա պ ե տ, էջ 33-35:*

*նակիցներ չունենար: Հենց նույն՝ 1041 թ., Դավիթը զորքով մտավ Անիի Բագրատունյաց թագավորության տարածք: Սակայն նրա հետագա գործողությունները՝ Շիրակն ասպատակելն ու գերեվարությունները, խոսում են ոչ այնքան Անիի Բագրատունյաց գահը տիրելու Դավթի ցանկության, որքան այդ թագավորությանը հնարավորինս շատ վնասելու մասին[32]: Դրանք Բյուզանդիայի շահերին համապատասխանելը մտածել է տալիս, որ նա կամ գործում էր բյուզանդական թելադրանքով, կամ էլ տեսնելով իբրև գահակալի՝ Անիի դռներն իր առաջ փակ լինելը, Շիրակի ավերմամբ վրեժխնդիր լինելով հետ դարձավ: Սակայն նա դրանով չբավարարվեց և 1042 թ. «յազդմանէ չարին կրկին շարժումն լինէր Յունաց՝ դավաճանութեամբ և կեղծաւորութեամբ սուտ քրիստոնէին Դաւթի Անհողինին»[33]: Եվ քանի որ Դավիթ Անհողինն իր նեղ անձնական շահախնդրություններով ուղղորդվող քաղաքականությամբ «ի վիհն տառապանաց էած զազգս քրիստոնէից»[34], ստացավ նոր՝ անարգական Դավիհ մականունը:*

*1045 թ. Բյուզանդիայի կողմից Անիի Բագրատունյաց թագավորության կործանումից հետո ինչպես Սյունիքի ու Կարս-Վանանդի, այնպես էլ Տաշիր-Զորագետի Կյուրիկյան թագավորությունները հայտնվեցին անկախ կարգավիճակում: Սակայն Տաշիր-Զորագետի թագավորությանն աստիճանաբար սպառնալու էր գալիս մի նոր վտանգ, ի դեմս Բագրատ IV-ի ժամանակ հզորանալու ուղին բռնած վիրաաբխազական թագավորության: Դրանից ելնելով՝ Դավիթ Անհողինը փորձում էր խանգարել Բագրատ Դ-ի՝ Վրաստանի միավորմանն ուղղված ջանքերը, առավել ևս, որ իր որդի Գագիկին պատկանող Կախեթ-Հերեթի թագավորության անկախությունը վտանգված էր: Հենց դրանով է բացատրվում Բագրատ IV-ի ամենահզոր կենտրոնախույս հակառակորդին՝ Թռեղքի իշխան Լիպարիտ Բագվաշին, Դավիթ Անհողինի բացահայտ աջակցությունը: 1047 թ. ամռանը Միսարեթ կոչվող վայրում Լիպարիտը, որի հավաքած զորքի կազմում էին նաև Դավիթ Անհողինի ու Գագիկի զորքերը, պարտության մատնեց Բագրատ IV-ի բանակին[35]: Այդուհանդերձ, սա ինչպես վրաց կենտրոնախույս ուժերի, այնպես էլ Տաշիր-Զորագետի Կյուրիկյան թագավորության ժամանակավոր հաջողությունն էր, քանի որ ժամանակն աշխատում էր ի վնաս նրանց:*

*Դավիթ Անհողինի հետագա գործունեության մասին սկզբնաղբյուրները լռում են: Թերևս, դա պայմանավորված է նրա մահով, քանի որ արդեն 1050 թ. իբրև Տաշիր-Զորագետի թագավոր է հիշատակվում նրա ավագ որդի Կյուրիկե I-ը[36]: Դավիթ Անհողինի մարմինն ամփոփված է Սանահինի Սուրբ Աստվածածին եկեղեցում՝ հոր կողքին: Ունեցել է 4 որդի՝ Կյուրիկե, Գագիկ, Ատրներսեհ, Սմբատ և մեկ դուստր՝ Հրանուշ:*

---

[32] *Մանրամասն տե՛ս Հ ո վ հ ա ն ն ե ս Ս կ ի լ ի ց ե ս, թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Հրաչ Բարթիկյանի, Երևան, 1979, էջ* XL-XLI:

[33] *Մ ա տ թ է ո ս Ո ւ ռ հ ա յ ե ց ի, էջ 88: Հմմտ. Ս մ բ ա տ Ս պ ա ր ա պ ե տ, էջ 35:*

[34] *Մ ա տ թ է ո ս Ո ւ ռ հ ա յ ե ց ի, էջ 88:*

[35] *Քարթլիս ցխովրեբա, հ. I, Թբիլիսի, 1955, էջ 300-301 (վրացերեն):*

[36] *Կ. Կ ո ս տ ա ն ե ա ն ց. Վիմական տարեգիր, Սանկտ Պետերբուրգ, 1913, էջ 23:*

*Թեև Կյուրիկե I-ը գահակալեց իբրև անկախ թագավոր, իսկ 1064 թ. Բյուզանդիայի կողմից Կարս-Վանանդի թագավորությունը վերացվելուց հետո դարձավ մայրամուտ ապրող Բագրատունյաց հարստության ազգապետ՝ խաղաղ իշխելով ընդամենը մեկուկես տասնամյակ: Տաշիր-Զորագետի Կյուրիկյան թագավորության անկախությունը կարճ տևեց, որովհետև այն շուտով հայտնվեց իր հարևանը դարձած Բյուզանդիայի քաղաքական ազդեցության ոլորտում: Եթե Բյուզանդիան փորձում էր այդ ճանապարհով Տաշիր-Զորագետի Կյուրիկյան թագավորության թեկուզ և թույլ ուժերն օգտագործել թուրք-սելջուկյան ահագնացող ճնշմանը դիմակայելու նպատակով, ապա Կյուրիկե I-ը թերևս բյուզանդացիների օգնությամբ հայոց պետականությունը վերականգնելու թույլ հույսեր էր փայփայում: Այդ հանգամանքով կամ էլ այլընտրանքի բացակայությամբ է բացատրվում, որ Կյուրիկե I-ը ընդունեց Բյուզանդիայի կայսր Կոստանդին Դուկասի (1059–1067) կողմից 1059–1063 միջև իրեն շնորհված կյուրապաղատի տիտղոսը և դրամ հատելու իրավունքը: Սակայն, ինչպես ցույց տվեցին հետագա իրադարձությունները, նրան սոսկ բախտ էր վիճակված ապարդյուն ջանքեր գործադրելու իր թագավորության գոնե կախյալ գոյությունը և տարածքային ամբողջականությունը պահպանելու համար:*

## ОБРАЗОВАНИЕ И УСИЛЕНИЕ ТАШИР-ДЗОРАГЕТСКОГО КЮРИКИЙСКОГО ЦАРСТВА

*АРТАШЕС ШАХНАЗАРЯН*

Р е з ю м е

Как свидетельствует сравнительный анализ источников, Ташир-Дзорагетское Кюрикийское царство младший сын Ашота III Гурген основал в 981 г. Это царство пережило расцвет во времена старшего сына Гургена Давида. Но уже во времена старшего сына Давида Кюрике I Ташир-Дзорагетское Кюрикийское царство под воздействием внешних факторов стало ослабевать.

## THE FORMATION AND REINFORCEMENT OF TASHIR-DZORAGET KYURIKYAN KINGDOM

*ARTASHES SHAHNAZARYAN*

S u m m a r y

The comparative analysis of the sources testifies that Tashir-Dzoraget Kyurikyan kingdom was founded by the youngest son of Ashot III Gurgen in 981. This kingdom prospered at the times of Gurgen’s eldest son David. But already at the times of David’s eldest son Kyurike I Tashir-Dzoraget Kyurikyan kingdom weakened under the influence of external factors.